«ARMENIA» ՀԱՆԴԵՍԻ ԷՋԵՐԻՑ

Դ. Պ. ՍՐԱՊՅԱՆ

Հայ լրագրության պատմության մեջ ուրույն տեղ ունեն անգլերեն լույս տեսած հայկական պարբերականները, որոնք անգլիախոս աշխարհին ծանոթացրել են հայ ժողովրդի հին ու հարուստ մշակույթին և կատարել հայանպաստ մեծ աշխատանք։

Բայց, ցավոք, անգլերեն հայ պարբերականների մասին մինչև այսօր ոչ մի ուսումնասիրություն չկա, ուստի և չի գնահատված վերջիններիս տեղը հայ մամուլի պատմության մեջ։

Հայկական պարբերականների մեջ առանձնակի նշանակություն ունի անգլերեն «Արմենիա» հանդեսը, որն իր գոյության ընթացքում՝ 1904—1929 թթ. երկու անգամ փոխել է իր անունը, իսկ մեկ անգամ՝ հրատարակության վայրը։ 1913 թ. փոխադրվելով Նյու-Յորք, այն լույս է տեսել «Դը Օրիենթալ Ուրլդ» (Արևելյան աշխարհ) խորագրով, իսկ հետո՝ 1914 թ. վերանվանվել է «Դը Նյու Արմենիա» (Նոր Հայաստան)[1]։

«Արմենիան» սկսվել է հրատարակվել 1904 թ. հոկտեմբերին, Բոստոնի ամերիկահայ գաղութում։ Հանդեսի պատվավոր խմբագիրներ են եղել մի շարք հայասեր ամերիկացիներ[2]։ Հանդեսի ծախսերը հոգալը, խմբագրելը, տարածելը, նոր համակիրներ ու աշխատակիցներ գտնելը մի հայկական հանձնախմբի պարտականությունն էր։

«Արմենիան» հրատարակվել է 3000 օրինակով, որից 1500-ը ձրի ուղարկվել է Եվրոպայի և Ամերիկայի նշանավոր անձանց՝ դիվանագետների, պառլամենտի անդամների, հոգևորականների և այլոց, իսկ 1200-ը հայերին[3]։

«Արմենիա» հանդեսի հետ սերտորեն կապված է Արշակ Տեր-Մահտեսյանի անունը։ Նա սկզբից մինչև 1910 թ. խմբագրել է այն, իսկ 1910—1929 թթ. եղել է նաև տնօրենը։

Արշակ Տեր-Մահտեսյանի հայացքների, ձգտումների և նպատակների մասին դժվար է դատափարկայել միայն «Արմենիա» հանդեսի նյութերի ուսումնասիրությամբ։ Նա լավ էր հասկանում, որ անգլերեն պարբերականը միայն հայերի համար չէր և չի շոշափել գաղութում տեղ գտած միջկուսակցական պայքարի, կրոնական և այլ կենցաղային հարցեր։ Բացի այդ, «Արմենիայի» էջերում նա շատ հալվաղյուտ է սեփական հոդվածներով հանդես եկել Հայկական հարցի մասին, քաջ գիտակցելով, որ միայն պատմական կոնկրետ փաստերը և իրենց հեղինակավոր համաքաղաքացիների կարծիքը նշանակություն ունի օտար ընթերցողի համար։

Ժամանակակիցները մեծ գովեստով են խոսել Ա. Տեր-Մահտեսյանի և

---

1 Այսուհետև գրելու ենք «Արմենիա»։

2 Տե՛ս «Ամերիկահայ Տարեցույց», 1912, Ա. Տարի, էջ 140։

3 «Արծիվ», 1908, № 3, էջ 35։

նրա հրատարակած պարբերականների մասին։ «Կռունկը» 1950 թ. Արշակ Տեր-Մահտեսյանի մահվան առթիվ հրատարակած հոդվածում գրել է. «Ամերիկահայ մամուլը շատ ու շատ բան կը պարտի Մահտեսյանին, որ նախակարապետն եղավ այդ մարդին մեջ»։ Ա. Ա. Պետիկյանը նրան համեմատելով Արշակ Չոպանյանի հետ, գրել է. «Ինչ որ Չոպանյանն իր կենդանության ժամանակ արել է Եվրոպայում, նույնն արեց Արշակ Մահտեսյանն Ամերիկայում, դարի սկզբից մինչև 1934 թ....», իսկ «Արմենիայի» մասին ավելացնում. «Ես երբեք անցած 35 տարիների ընթացքում, չեմ տեսել մի հրատարակություն անկեղծորեն, որը հրատարակվեր ավելի ճաշակով և բովանդակալից, քան «Դը Նյու Արմենիան»։

«Արմենիայի» նյութերը շատ են ու բազմազան։ Մենք առանձնացրել ենք փոքր, բայց հայ ժողովրդի համար ճակատագրական մի ժամանակաշրջանի՝ 1904—1917 թթ. հրատարակված այն հոդվածները, որոնք ցույց են տալիս, թե ինչպես հայ ժողովուրդը տանջվում էր սուլթանական Թուրքիայի և ցարական Ռուսաստանի լծի տակ։

Ա. Տեր-Մահտեսյանն, ինչպես արդեն ասացինք, շատ քիչ է ինքնուրույն հոդվածներով հանդես եկել, բայց կարողացել է նյութերն այնպես ընտրել, որ այդ կերպ արտահայտել է իր գաղափարներն ու ձգտումները։ Հանդեսում լույս տեսած հոդվածներն, հիմնականում ցույց են տալիս հայ ժողովրդի ողբերգական վիճակը Թուրքական բռնապետության և մասամբ ցարական միապետության լծի տակ այն ժամանակ, երբ էնգելսի բնորոշմամբ, Հայաստանը գտնվում էր «Թուրքական բռնակալության Սցիլլայի և ռուսական Խարիբդայի արանքում»[6] դրանք բացահայտում են նաև մեծ տերությունների քաղաքականության էությունը Հայկական հարցի նկատմամբ։

Խոսելով իր նպատակների և անելիքների մասին, «Արմենիան» գրել է, որ հայկական կոտորածների սարսափները բնականորեն մեծացրել են արդարության և ազատության մարտիկների համակրանքը հայ ժողովրդի նկատմամբ, և որ հանդեսի նպատակն է ցույց տալ քաղաքակիրթ աշխարհին հայ ժողովրդի անցյալ և ներկա վիճակը օսմանյան Թուրքիայի իրականության մեջ։

Թուրքական վարչակարգը բնութագրելիս «Արմենիան» բերում է դեռևս Ղրիմի պատերազմի ժամանակից Թուրքական մեքենային քաջ ծանոթ անգլիական գեներալ Ուիլիամսի բնորոշումը. «Այն միապետական մի այնպիսի մեքենա է, որը հավանաբար հավասարը չունի աշխարհում»։ Մեքենա, որը միջոց էր ճնշելու, քամելու, նվաստացնելու ու սպանելու համար։ Նրա ներքին քաղաքականության սուր ծայրն ուղղված էր քրիստոնյաների, հատկապես հայերի դեմ, իր առջև մի քստմնելի խնդիր ունենալով, հալածել հայերին, հասցնել ծայր աստիճան թշվառության, սովամահ անել և մեկընդմիշտ վերացնել երկրի երեսից։ «Նրանց քաջագործությունների վայրը,— գրել է նույն գնահատողը,— ընկած է գյուղերում, հատկապես այն գյուղերում, որոնք բնակեցված են քրիստոնյաներով»[7]։ Ավելի ուշ շրջանի Թուրքիայի կառավարման սիստեմի մասին հանդեսը արտատպել է «Բոստոն Թրանսքրիփթից» մի հոդ-

---

4 «Կռունկ», 1950, մայիսի 12, էջ 5։

5 „Armenian Mirror Spectator", 1950, հուլիսի 13, էջ 1։

6 К. Маркс и Ф. Энгельс, Сочинения, изд. 2-ое, т. 39. стр. 271.

7 «Արմենիա», 1904, № 2, էջ 4։

ված՝ «Չկառավարվող Թուրքիա» վերնագրով, որտեղ ասված է. «Ներկայումս, թվում է, թե Թուրքական կայսրության մեջ վարչակարգ հիշեցնող ոչինչ գոյություն չունի, որը իրավամբ կարող է կառավարություն կոչվել»[8]։ Եվ երբ Աբդուլ Համիդին փոխարինելու էին եկել Երիտասարդ Թուրքերը, որոնք ժառանգելով նրա հայահալած քաղաքականությունը, այն հասցրին հրեշավոր չափերի, «Արմենիան» բնութագրելով նոր ռեժիմը և նրա իրագործողներին, տպագրել է Էջ. Դիլոնի «Երիտասարդ Թուրքերի ռեժիմի անհուսալիությունը» վերնագրով հոդվածը։ Հեղինակը, այստեղ, երիտԹուրքերին անվանում է «տղայական քաղաքագետներ», որոնք «հավաքվել են գաղտնաբար, ձեռնարկել հեռուն գնացող քաղաքական գործողություններ, առանց հսկողության, առանց պատասխանատվության և երկիրը վերածում են ավերակների, առանց պատժից վախենալու»[9]։

«Արմենիան» անդրադարձել է և նաև Օսմանյան կայսրության հայահալած քաղաքականության ձևերին ու մեթոդներին, որոնցից առաջինը բռնի ուժով ամբողջ գյուղեր իսլամացնելն էր։ Այդ կապակցությամբ Մարսել Լեարդը պարբերականում մի շարք փաստեր է հրապարակել։ Նա գրել է, որ Բիթլիսի վիլայեթում 1800 թ. իսլամ են ընդունել Խոյի և Սլիվանի շրջանները, 1820 թ. Թորթումի շրջանը, Իսփիրը և Էրզրումի վիլայեթում Բայբուրթը, 1830 թ. Համշենի և Յանբոլի շրջանները[10]։ Մյուս մեթոդը դա հարթավայրերի գյուղերից տեղի հայերին վտարելով այնտեղ քրդերով բնակեցնելն էր[11]։ Բայց ամենածանրը հարկերն էին։ Օսմանյան կայսրությունը հարկերի հավաքման մեջ հատուկ իմաստ էր դնում, նախ՝ բնակչությանը հասցնել ծայրաստիճան աղքատության, երկրորդ՝ լեռնցիներին քշել դեպի հարթավայրերը, զրկելով նրանց իրենց բնական ամրոցներից, որպեսզի անհրաժեշտության դեպքում, նրանք դիմադրություն չցուցաբերեն[12]։ Օսմանյան իշխանությունների նպատակների իրագործմանը ծառայում էր նաև կրակը։ «Արմենիան» մեջբերում է արել, դեռ 1876 թ. Էրզրումի ամերիկյան հյուպատոսի զեկուցագրից, որտեղ հյուպատոսը խոսում է Վանում բռնկված հրդեհի մասին, որը հիմնահատակ էր արել ավելի քան 1000 կառույց, իսկ կառավարությունը փոխանակ հանգցնելու այն, նպաստել էր հրդեհի տարածմանը[13]։ Հրդեհները հաճախակի երևույթներ էին հայկական գավառներում, որի համար էլ «Արմենիան» ընդգծել է, թե հրդեհի մասին այդ հաղորդագրությունները կասկածից դուրս են թողնում նրանց պատահական լինելը և որ դա կառավարության կողմից հայերին հալածելու մեթոդներից մեկն է[14]։

Հայտնի է, որ կոտորածները պետական ուժ ստացան XIX դարի 90-ական թվականներից, արյունարբու Աբդուլ Համիդի իշխանության օրերին։ Բեռլինի կոնգրեսից հետո Աբդուլ Համիդը և նրա համախոհներն իրենց առջև խնդիր դրեցին Հայկական հարցը լուծել ուրույն ձևով՝ հայերին բնաջինջ անելու միջոցով։

---

8 Նույն տեղում, 1904, № 1, էջ 52։
9 Նույն տեղում, 1912, № 6, էջ 169։
10 Նույն տեղում, 1913, հ. 7, № 2, էջ 37։
11 Նույն տեղում, 1904, № 2, էջ 71։
12 Նույն տեղում, 1905, № 5, էջ 54։
13 Նույն տեղում, 1905, № 10, էջ 11։
14 Նույն տեղում, 1904, № 1, էջ 46։

1895—1896 թթ. կոտորածներին «Արմենիան» անդրադարձել է առանձին հոդվածներով, իսկ ժամանակի դեպքերի մասին պարբերաբար հաղորդագրություններ է տպագրել «Դեպքերը Հայաստանում» կամ «Վիճակը Հայաստանում» խորագրերով։ Խոսելով օսմանյան Թուրքիայում տարածված կոտորածների մասին, հանդեսը հիշում է 1822 թ. Քիոսում սպանված 23000 հույն քրիստոնյաների, 1850 թ. Քրդիստանում 10000 նեստորականների և հայերի, 1867 թ. Կրետեում քրիստոնյա երեխաների և կանանց, 1876 թ. 10000 բուլղարների և 1894—1896 թթ. հայերի կոտորածները։ Իսկ այժմ, գրում է հանդեսը, պատմությունը կրկնում է ինքը իրեն[15]։ Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ՝ 1915 թ. սկսվեցին հայկական մասսայական կոտորածները։ Այդ կոտորածների լուրը, չնայած Թուրք կառավարության ձեռք առած խստազույն միջոցներին, իր ահավոր մանրամասնություններով տարածվեց աշխարհով մեկ։ «Արմենիան» նույն 1915 թ. տպագրում է Լ.դուարդ Քլեմենտի «Սպանվող Հայաստան» ծավալուն հոդվածը, որտեղ հեղինակը խոսում է շարունակվող կոտորածների մասին[16]։ Բացի հոդվածներից «Արմենիան» տպագրել է լուրեր Արևմտյան Հայաստանից և Թուրքիայի հայաշատ քաղաքներից «Վիճակը Հայաստանում» խորագրով։

Բնութագրելով հայերի վիճակը Թուրքական լծի տակ, հանդեսը գրել է. «Հայ գյուղացին դատապարտված էր աշխատելու հօգուտ քրդերի և Թուրքերի, տանելու նրանց ագահությունը, կրքերն ու կամայականությունները։ Այս փոքրիկ տերերը ոչ միայն կողոպտում էին գյուղերը, պղծում նրանց կանանց և փախցնում աղջիկներին, այլև, անպատիժ կերպով սպանում էին նրանց տղամարդկանց, որոնք փորձում էին դիմադրություն ցույց տալ»[17]։ Մեկ ուրիշ տեղ բնագետ Հ. Մ. Բրեյլֆորդը, բնութագրելով XIX դարի վերջին և XX դարի սկզբին Թուրքիայում ապրող քրիստոնյաների վիճակը, գրել է. «...դա մի ենթակա ժողովուրդ է, որի կյանքը Թունավորված է վախից և անարդարությունից։ Կոչված է ընտրություն կատարելու համբերության, ամենօրյա շահագործման և անհոգի ճնշումների միջև»[18]։

«Արմենիան», հանգամանորեն ցույց տալով Թուրքական կայսրության մեջ ապրող հայերի ողբերգական վիճակը, միևնույն ժամանակ աշխատում է բացատրել հայ ժողովրդի և նրա հետ կապված Թուրքական քաղաքականության մի քանի հարցեր։ Նա հրատարակել է «Անօրինականություններից մինչև կազմակերպված ճնշումներ» վերնագրով մի առաջնորդող, որտեղ բազմաթիվ փաստերով ապացուցում է, որ այդ հալածանքները կառավարության կողմից որդեդրած, պարբերաբար կրկնվող քաղաքականության արդասիքն են[19]։ Հանդեսը համամիտ չէ նաև եվրոպական մամուլում տարածված այն կարծիքին, թե Թուրքական կառավարման «ապականության հետևանքով և՛ մուսուլմանները և՛ քրիստոնյաները տուժում են միահավասար»[20]։ Ի հակադրություն դրան, «Արմենիան» մեջբերում է անում «Սփիքր» (Խոսող) ամսագրից, որը

15 Նույն տեղում, 1904, № 2, էջ 41—47։
16 «Նյու Արմենիա», 1915, հ. 8, № 1, էջ 3—4։
17 «Արմենիա», 1904, № 2, էջ 4։
18 Նույն տեղում, 1904, № 4, էջ 49։
19 Նույն տեղում, 1904, № 2, էջ 4։
20 Նույն տեղում, 1904, № 1, էջ 53։

գրել է. «մի մեր ծպտյալ համակրանք կա պաշտոնյաների և տեղական մոլլոանդների միջև» և որ քրիստոնյաները մի քանի անգամ ավելի շատ են կրում կառավարական ճնշումները քան մահմեդականները[21]։

«Արմենիան» ժխտում է նաև այն սուտ լուրերը, որոնք տարածում էին Բուրքոֆիլները, թե իբր, թուրքական իշխանությունների հայահալած քաղաքականությունը պայմանավորված էր երկրի ներսում հայկական հեղափոխական շարժումներով։

Հայ ազգային-ազատագրական շարժումները ծնունդ էին հայ ժողովրդի հալածական վիճակի և ազատության ու առաջադիմության բնական բողոքն էին ռեակցիոն բռնապետության դեմ։ Այդ է ապացուցում «Արմենիայում» հրատարակված, բրիտանական դեսպան Սըր Ֆիլիպ Քըրին ուղղված էրբլի գեկուցագիրը, որտեղ նա գրում է, որ Ռուստամ փաշան 1895 թ. հայկական շարդերը աշխատել է պատճառաբանել հեղափոխական շարժումներով. «Ես պատասխանեցի, որ ես միայն կարող եմ կրկնել իմ կարծիքը Նորին Գերազանցությանը, որ, չնայած, անկասկածորեն, կային մի քանի հեղափոխական գործակալներ, բայց պատճառը ավելի խորն է ընկած և ծագել էր Թուրքիայում իրենց վատ կառավարումից»[22]։

«Արմենիան» ցարական իշխանության ներքո ապրող հայերի վիճակի լուսաբանմանը քիչ է անդրադարձել, գտնելով, որ «...հայերը ռուսական իշխանության օրոք վայելում են կյանքի և ունեցվածքի ապահովություն և շատ ավելի լավ են, քան օսմանյան ճնշման ներքո»[23], բայց երբ 1905 թ. կեսերին, աշխատելով խանգարել տարբեր ազգերի միասնությունը, ցարիզմը ազգամիջյան կռիվներ էր հրահրում երկրի ներսում հայ և մուսուլման տարրերի միջև, պարբերականը սկսում է անդրադառնալ ցարիզմի հակահայկական գործողություններին, վերլուծելով այն իր ուրույն տեսանկյունից։ Անդրադառնալով այն խոստումներին և գովեստներին, որոնք Ռուսաստանը, նախքան Անգլերկովկասի գրավումը հայերի համակրանքը շահելու համար ժամանակ առ ժամանակ տալիս էր հայ ժողովրդին։ Ամսագիրը գրել է Ալեքսանդր առաջինի հրամանագրի (1813 սեպ. 15-ին), Ներսես կաթողիկոսին Նիկոլայ առաջինի հղած ուղերձի (1827, փետր. 2-ին) և ռուս-պարսկական պատերազմի ժամանակ տրված խոստումների մասին, որոնք հավատացնում էին հայերին, որ եթե պատերազմը վերջանա հօգուտ Ռուսաստանի, հայերը կստանան ինքնավարություն Ռուսաստանի հովանավորության տակ[24]։ Բայց պատերազմը վերջանալուն պես բոլոր խոստումները մոռացվեցին և «Հայկական անկախությունը ժխտվեց»— ցավով գրում է «Արմենիան»։

«Արմենիան» քննադատել է և ցարիզմի ռուսականացման քաղաքականությունը, որի իրականացման համար կայսրությունը դիմում էր գանազան միջոցների՝ ռուսերենը զարձրել էր պարտադիր, փակել էր գավառական դպրոցները և վերջապես այդ նպատակին էր ծառայում 1903 թ. հունիսի 12-ին Նիկոլայ երկրորդի ստորագրած օրենքը, որով բռնագրավվում էր հայկական հոգևոր հաստատությունների շարժական և անշարժ գույքը։ Համարյա բոլոր

21 Նույն տեղում, 1905, № 4, էջ 48։
22 Նույն տեղում, 1913, № 6, № 12, էջ 365։
23 Նույն տեղում, 1905, № 9, էջ 23։
24 Նույն տեղում, 1905, № 7, էջ 39—40։

հայկական պարբերականները, դրանց թվում և «Արմենիան» ցարական այս օրգանը մեկնաբանելիս որպես հայկական հալածանքների ուժեղացում։ «Սրբանք խիստ քայլեր են,— գրում է «Արմենիան»— որոնք ձեռք են առնվել հայերի ռուսականացման համար»[25]։

Ցարական կայսրության ծայրամասերի նկատմամբ տարվող ռուսականացման քաղաքականության հիմնական նպատակն էր այլազգիներին զրկել իրենց մշակույթից, լեզվից, իսկ երկիրը դարձնել կայսրության անբաժանելի մասը, այնտեղ ապրող հլու-հնազանդ տարրերով։ Նրանց նշանաբանն էր. «Ռուսականացնել այն բոլորը, ինչ ռուսական չէ, ուղղափառացնել, ինչ ուղղափառ չէ»[26]։

Ցարիզմը, վախենալով ռուսական առաջին հեղափոխության աճող ալիքից, որը դուրս էր եկել բուն ռուսական սահմաններից և իր արձագանքն էր գտնում Անդրկովկասի ժողովուրդների մեջ, աշխատում էր ազգամիջյան կռիվների միջոցով շեղել մասսաների ուշադրությունը հեղափոխական գործունեությունից։ «Արմենիան», քննադատելով ցարական կառավարության նման քաղաքականությունը և հաստատելու համար իր տեսակետի իսկությունը, վկայակոչում է Մաքսիմ Գորկուն, ասելով. «Թուրքական շարժումը իր ծագումով դրդված էր կառավարության կողմից, մի տեսակետ, որը իր վերջին հաստատումը ստացավ Մաքսիմ Գորկու շուրթերից»[27]։ Ցարական միապետությունը «կարծում էր,— շարունակում է «Արմենիան»,— որ երկպառակություն սերմանելով հայերի, թաթարների և վրացիների մեջ և գրգռելով արյունալի ընդհարումներ, կարող էր խուսափել ներքին քաղաքական փոթորիկներից, որոնք տեղի էին ունենում Կովկասում»[28]։

Հանդեսը տեսնելով հայ և ադրբեջանցի առաջադեմ մարդկանց ջանքերը՝ երկու ժողովուրդների դարավոր բարեկամությունը վերականգնելու և կոտորածներին վերջ տալու համար, իր ուրախությունն է հայտնում, ասելով, «ճիշտ է, Բարվում մուսուլմանները հարձակվեցին հայերի վրա և կոտորած սկսվեց, կոյ տալով իր մեջ հազարավոր կյանքեր..., բայց ղեկավար հայերից և մահմեդականներից կազմված մի մարմին... հաստատեց խաղաղություն երկու մասերի միջև»։ «Այժմ,— շարունակում է նա,— հակառակ կառավարության դժգոհությանը, թուրքերի, հայերի և վրացիների միջև հարաբերություններն ավելի են ուժեղացել»[29]։

XX դարի սկզբների Անդրկովկասի և Հայաստանի բանվորա-գյուղացիական հուզումներն իրենց արտահայտությունն են գտել «Արմենիա» հանդեսում, որը դրանք արձանագրել է «Վիճակը Կովկասում» հոդվածաշարով։ «Արմենիան» հայտարարում է. «Մի հեղափոխություն է պայթել և աղքերը միացել են մեկ ընդհանուր գործի համար։ Միտինգներ են արվում Կովկասի տարբեր քաղաքներում, որտեղ բրիսասնյաները և մահմեդականները կողք-կողքի քննարկում են հանրության ընդհանուր վիճակը և անց են կացնում բանաձևեր ուղղված ցարական կառավարությանը»[30]։

---

25 Նույն տեղում, 1905, № 7, էջ 38։
26 «Русская мысль», 1911. № 12.
27 «Արմենիա», 1905, № 12, էջ 5։
28 Նույն տեղում, 1905, № 7, էջ 44
29 Նույն տեղում։
30 Նույն տեղում, 1905, № 9, էջ 26։

1905—1907 թթ. հետո ցարական ինքնակալությունը արյան մեջ խեղդեց ժողովրդական շարժումները և սկսեց դաժան դատաստան տեսնել նրանց մասնակիցներն հետ։ Մեր ձեռքի տակ չունենալով հանդեսի այդ տարիների համարները, չենք կարող ասել, թե ինչպես է նա վերաբերվել ռեակցիայի այդ տարիներին, բայց 1912 թ. կրկին անդրադառնալով այդ օրերին պարբերականը դրել է. «Վերջին երեք տարիների ընթացքում հազարավոր բանվորներ խուզարկվել են և հարյուրավոր մարդիկ, ներառյալ շատ հայտնի գրողներ, պրոֆեսորներ, իրավաբաններ, բժիշկներ և առևտրականներ ձերբակալվել և նետվել են զնդաններ»[31]։

1912-ին սկսված հեղափոխական վերելքի տարիներին, երբ գործադուլի նոր ալիք էր բարձրանում Հայաստանի տարբեր քաղաքներում, պարբերականը չի անդրադարձել։ Բայց եթե այդ տարիներին հանդեսը հաղորդագրություններ չի տվել նշված դեպքերի մասին, ապա հրատարակել է Մաքսիմ Գորկու «Մարդը», «Մրրկահավի երգը» գործերը, որոնք ավետում էին մոտալուտ փոթորիկը[32]։

Ահա այսպես է «Արմենիան» օտար ընթերցողին ծանոթացրել հայ ժողովրդի պատմության մի նշանակալից շրջանին։

ИЗ СТРАНИЦ ЖУРНАЛА «ARMENIA»

Д. П. СРАПЯН

Резюме

Среди армянских англоязычных журналов, которые до сих пор не изучались, особое место занимает «Armenia», призванная показать цивилизованному миру прошлое и настоящее армянского народа в условиях османской действительности и обратить внимание общественности на его тяжелое положение. Журнал вскрывал также и великодержавную политику царской России.

Издаваемая с 1904 года в Бостоне, «Armenia» устами неармянских авторов знакомит иностранного читателя с методами и формами угнетения армян в Турции и царской России.

---

31 *Նույն տեղում, 1912, հ. 5, № 11, էջ 336։*

32 *Նույն տեղում, № 7, էջ 200—201։*